

ՀԱՅ—ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԵԼԼԻ ՆԻԿՈՂՈՍԻ

**ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ, ՆԵՐԱՌՑԱԼ
ՀԱՆՁՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
(ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ- ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

ԺԲ.00.04 – «Դատական իրավունք» (դատարանակազմություն,
քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն,
կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն,
օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն)
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Ս Ա Գ Ի Ր

Երևան – 2022

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

АРУТЮНЯН НЕЛЛИ НИКОГОСОВНА

**ПРОБЛЕМЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ЗАКОНОДАТЕЛЬСТВА РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ ПО ОКАЗАНИЮ ПРАВОВОЙ ПОМОЩИ ПО УГОЛОВНЫМ ДЕЛАМ,
ВКЛЮЧАЯ ЭКСТРАДИЦИЮ
(СРАВНИТЕЛЬНО- ПРАВОВОЙ АНАЛИЗ)**

Автореферат

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук
по специальности 12.00.04 – Судебное право (судоустройство, гражданский процесс,
уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория
оперативно-розыскной деятельности)

Ереван – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Ս.Ա.Դիրանդյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Վ.Գ.Ենգիբարյան**

իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Ռ.Ն.Մելիքյան**

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ Արդարադատության ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ. մարտի 17-ին ժամը
16.00-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ԲՈԿ-ի Իրավագիտության 063
մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հ. Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի
գրադարանի ընթերցասրահում:

Մեղմագիրն առաքվել է 2022 թվականի փետրվարի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

իրավաբանական գիտությունների թեկնածու



Ջ.Հ.Հայրապետյան

Тема диссертации была утверждена в Институте философии, социологии и права при академии наук РА.

Научный руководитель:

доктор юридических наук, профессор
С.А.Дилбандян

Официальные оппоненты:

доктор юридических наук, профессор
В.Г.Енгибарян

кандидат юридических наук, доцент
Р.Н.Меликян

Ведущая организация:

Академия Юстиции РА.

Защита состоится 17-го марта 2022г. в 16.00 часов на заседании
специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-
Армянском университете (0051 Ереван, ул. О. Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале библиотеки Россиско-
Армянакого университета.

Автореферат разослан 7-го февраля 2022 г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук



Д.ж.А.Айрапетян

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ներկա ժամանակաշրջանում, միջազգային կյանքում տեղի ունեցող գլոբալ զարգացումները խնդիրներ են ստեղծում նաև հանցավորության դեմ պայքարի հարցում, ինչը չի կարող լուծվել միայն ազգային-պետական միջոցներով և մեթոդներով: Ինչպես հայտնի է պետությունների համագործակցության հրամայականը միջազգային իրավունքի *Jus cogens* սկզբունքներից է, որն ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրությունում, Միջազգային իրավունքի սկզբունքների մասին 1970թ. հռչակագրում, 1975թ ԵԱՀԿ Եզրափակիչ ակտում և մի շարք այլ փաստաթղթերում:

Պայմանավորված հանցավորության դեմ պայքարում պետությունների համագործակցության առանձնահատկությամբ, այն զարգանում է երկու հիմնական ուղղություններով. կոնվենցիոն (միջազգային բազմակողմ ունիվերսալ, ռեգիոնալ, երկկողմ, լոկալ համաձայնագրերի կնքման միջոցով) և ինստիտուցիոնալ (ինչպես ունիվերսալ միջազգային կառույցների (կոմիտեներ և հանձնաժողովներ, ՄԱԿ-ի մասնագիտացած հաստատություններ), այնպես էլ տարածաշրջանային կազմակերպությունների միջոցով (Եվրոպայի Խորհուրդ, ԵԱՀԿ, Ինտերպոլ և այլն): Միջազգային պրակտիկան վկայում է, որ հանցավորության դեմ պայքարի արդյունավետ իրավական միջոցներ են հանձնման և քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերման ինստիտուտները, ինչի շնորհիվ ապահովվում է պատժի անխուսափելիությունը և հանցագործություն կատարած անձանց պատասխանատվության ենթարկումը: Պատահական չէ, որ «ՄԱԿ-ի գլոբալ հակահաբեկչական ստրատեգիայի» շրջանակներում ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 2006 թվականի սեպտեմբերի 8-ին ընդունված թիվ 60/288 բանաձևում էքստրադիցիան պետությունների քրեաիրավական հարցերով համագործակցության մեխանիզմի կենտրոնական տարրերից մեկն է դիտարկվում: Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի հետազոտման արդիականությունը պայմանավորված է դրանց նշանակությամբ՝ միջազգային-իրավական տեսության և պրակտիկայի համատեքստում, քանի որ դրանք անմիջականորեն փոխկապակցված են մարդու իրավունքների, պետությունների ենթադատության, քաղաքացիության և այլ հիմնարար իրավական կատեգորիաների հետ:

Հանձնման և քրեական գործերով իրավական օգնության ինստիտուտներին առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է հանցավորության դեմ պայքարի հարցում միջազգային համագործակցության կատարելագործման, ինչպես նաև փոխգործակցության շրջանակների ընդլայնման անհրաժեշտությամբ: Հանձնման հետ կապված ժամանակակից զարգացումների վերլուծությունը, վկայում է, որ անհրաժեշտ է էականորեն վերանայել այս իրավական ինստիտուտը՝ այն

համապատասխանեցնելով միջազգային հանցավորության դեմ պայքարի ժամանակակից պահանջներին:

Իրականացված ուսումնասիրությունները վկայում են, ոչ մինչ օրս չի ձևավորել էքստրադիցիայի համընդգրկուն համակարգ, որը հիմնված կլիներ ունիվերսալ պայմանագրաիրավական բազայի վրա:

Հանձնման գործող միջազգային-իրավական համակարգը հիմնականում հիմնվում է այնպիսի նորմատիվ կանոնակարգման վրա, որն այնքան էլ համարժեք չէ ժամանակակից իրողություններին, որոնք հետևանք են այնպիսի հանցագործությունների, ինչպիսիք են սահաբեկչությունը, մարդկանց թրաֆիկինգը, փողերի լվացումը, կիբեռ հանցագործությունները:

Հետագոտվող թեմայի արդիականությունը նաև պայմանավորված է հանձնման գործընթացում մարդու իրավունքների սպառնալուծման հիմնախնդրի հետ կապված գործնական և տեսական հարցերի վերլուծությամբ, այս ոլորտում նոր դոկտրինալ աղբյուրների, միջազգային դատական (քվադրիդատական) մարմինների փորձի, ինչպես նաև ներպետական դատական պրակտիկայի ուսումնասիրության և ընդհանրացման անհրաժեշտությամբ: Հանցավորության դեմ պայքարի առաջնահերթությունների և հանձնման գործընթացում ներգրավված անձանց իրավունքների պաշտպանության միջև լավագույն հավասարակշռության ապահովումը քրեաիրավական հարցերով պետությունների համագործակցության համակարգի կարևորագույն բաղկացուցիչ է, ինչով էլ պայմանավորված է հանձնման իրավապաշտպան գործառույթի համալիր վերլուծությունը և առկա խնդիրների վերաբերյալ նոր տեսական մոտեցումները:

Հետագոտության նպատակը և խնդիրները: Ուսումնասիրության նպատակը քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման հիմնական տեսակների, դրանց ցուցաբերման իրավական հիմքերի և ընթացակարգերի վերլուծությունն է, ինչպես նաև կատարված վերլուծության հիման վրա իրավապահ մարմինների աշխատակիցների համար տեսական և գործնական բնույթի առաջարկությունների մշակումը:

Այդ նպատակին հասնելու համար սահմանվել են հետագոտման ենթակա հետևյալ խնդիրները.

- էքստրադիցիայի և քրեական գործերով իրավական օգնության դոկտրինալ հիմքերի ուսումնասիրություն;
- քրեական գործերով իրավական օգնության և հանձնման հասկացության ձևակերպում և դրա բովանդակության ներկայացում;
- միջազգային դատական ատյանների (ՄԱԿ-ի միջազգային դատարան, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, մարդու իրավունքների միջամերիկյան դատարան և այլն), քվադրիդատական մարմինների (Մարդու իրավունքների կոմիտեի, Խոշտանգումների դեմ կոմիտեի), ինչպես նաև ազգային դատական մարմինների ՀՀ, ՌԴ,

Բելգիա, Գերմանիա, Նիդեռլանդներ, ԱՄՆ, Ֆրանսիա, Շվեյցարիա և այլն պրակտիկայի համալիր վերլուծություն;

- Էքստրադիցիայի իրավական կարգավորման առանձնահատկությունների վերհանում հիմնարար կանոնների, կրկնակի հանցավորության, հատուկ կանոնի և այլ սկզբունքների ռեգյուլատիվ գործողության հաշվակցմամբ;
- Էքստրադիցիոն պրակտիկայում «քաղաքական հանցագործությունների» բացառման հայեցակարգի ուսումնասիրություն, դրա փոխկապակցվածությունը և փոխգործակցությունը միջազգային իրավունքում փախստականի կարգավիճակի հետ;
- Էքստրադիցիայի փոխկապակցվածությունը քրեական ենթադատության տարբեր տեսակների, ներառյալ ունիվերսալ ենթադատության հետ;
- հանցավորության դեմ պայքարում հանրային-իրավական շահերի և էքստրադիցիոն գործընթացքում իրավապաշտպան գործոնի ապահովման անհրաժեշտության միջև օպտիմալ հավասարակշռության սահմանման մարտավարության հիմնավորումը;
- ոլորտը կարգավորող ՄԱԿ-ի, ԵԽ և ԱՊՀ մասնակից-պետությունների գործող միջազգային-իրավական փաստաթղթերի և քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերման տեսանկյունից դրանց կիրառման պրակտիկայի ընդհանրացում և վերլուծություն;
- քրեական գործերով իրավական օգնության տեսակների նշանակության և բնութագրող հատկանիշների վերհանում;
- քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության կազմակերպարարական մեխանիզմի հիմնավորում;
- հանցավորության դեմ պայքարում համագործակցության տարբեր մոդելների վերլուծություն՝ «հորիզոնական» և «ուղղահայաց»;
- Էքստրադիցիայի եվրոպական մեխանիզմի բարեփոխումների զարգացման միտումների վերհանում, քրեաիրավական հարցերով միջազգային համագործակցության նոր իրավաբանական գործիքի՝ եվրոպական կալանքի թույլտվության վերլուծություն;
- քրեական գործերով իրավական օգնության կատարելագործմանն ուղղված պրակտիկայից բխող առաջարկությունների մշակում և ներկայացում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը հանձնման և քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերման բնագավառում պետությունների համագործակցությունն է, մասնավորապես այդ բնագավառում միջազգային և ներպետական իրավական նորմերի համակցությունը, իսկ առարկան՝ քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման մասին միջազգային-իրավական փաստաթղթերով կանոնակարգվող

պետությունների գործունեությունն է՝ ուղղված հանցավորության դեմ պայքարում պայմանագրային պարտավորությունների կատարմանը, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարի և մարդու իրավունքների պաշտպանության լավագույն հավասարակշռության կառուցակարգերի կատարելագործմանը:

Հետազոտության թեմայի գիտական մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը: Քրեական հանցավորության դեմ միջազգային համագործակցության իրավական կարգավորման, քրեական դատավարության ոլորտում միջազգային իրավունքի նորմերի կիրառության հարցերը հետազոտվել են այնպիսի հանրահայտ իրավաբանների կողմից. ինչպիսիք են Ֆ.Ֆ. Մարտենսը, Մ.Ֆ. Վլադիմիրսկի-Բուդանովը, Ի.Յա. Ֆոմիցկին, Ն.Ս. Տազանցը, Ն.Դ. Սերգենսկին, Վ.Պ. Դանսկին, Պ.Ե. Կազանսկին, Ա.Ս. Յաշչենկոն:

Խորհրդային ժամանակաշրջանում քրեական արդարադատության բնագավառում միջազգային համագործակցությանը և քրեական իրավունքի և քրեական դատավարության տարբեր ասպեկտներին իրենց աշխատություններում անդրադաձել են գիտնականներ Ն.Տ. Բլատովան, Պ.Ն. Բիրյուկովը, Ա.Ի. Բաստրիկինը, Ռ.Լ. Բորբովը, Ի.Պ. Բիլչենկոն, Ն.Վ. Ժդանովը և այլոք:

Վերջին տարիներին ներպետական քրեական դատավարության մեջ միջազգային իրավունքի նորմերի կիրառության տեսական հարցերով են զբաղվել Ա.Հ. Աբաշիձեն, Ս.Ս. Բեյլանը, Վ.Գ. Բեսարաբովը, Պ.Ն. Վալենը, Յու.Գ. Վասիլևը, Գ.Վ. Դաշկովը, Ե.Վ. Բիկովան, Ռ.Ա. Քալամբարյանը, Յու.Ի. Միզաչևովը, Ս.Ա. Լոբանովը, Ի.Ի. Լուկաշովը, Է.Բ. Մելնիկովան, Կ.Ս. Ռադոնովը, Ա.Ս. Շահիյանը, Կ.Ա. Բեկյաշևը, Ա.Ի. Բոյցովը և այլոք: Հայ դատավարագետներից կարելի է առանձնացնել Ա. Ա. Թամազյանի, Ա. Գ. Հովսեփյանի, Գ. Ս. Ղազինյանի, Վ. Հ. Հովհաննիսյանի, Ս. Ա. Դիլբանդյանի, Վ.Վ. Քոչարյանի աշխատությունները:

Արևմտյան մասնագետներից հանձնման հարցերին անդրադարձել են Շ. Բասսիունին, Ի. Բանտեկասը, Ս. Բրանիկը, Ս. Բեդին, Կ. Վանդեն Վինդերտը, Ս. Վետնցելը, Կ. Գալլանտը, Ջ. Գալիցկին, Գ. Գինգրուզը, Գ. Գրիֆֆտը, Գ. Ջիլբերտը, Կ. Ջոյները, Ամ. Քենպբեյլը, Ս. Քելլին, Կ. Սաֆֆերլինզը, Վ. Շաբասը, Ա. Շիրերը և այլոք:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Ատենախոսությունը մոնոգրաֆիկ հետազոտություն է, որտեղ իրականացվել է հանձնման և քրեական գործերով իրավական օգնության համալիր համեմատական վերլուծություն և հանձնման տեսական ու գործնական հիմնախնդիրների վերհանում՝ հաշվի առնելով միջազգային քրեական իրավունքում դրանց զարգացման նորագույն միտումները:

Հեղինակի կողմից մշակվել են մի շարք տեսական դրույթներ, որոնց կիրառությունը կարող է որակվել գիտական հիմնախնդրի լուծում. էքստրադիցիայի մեխանիզմի վերանայման հիմնական պարամետրերի հիմնավորում՝ հաշվի առնելով հանցավորության դեմ պայքարի ժամանակակից պահանջները, քրեաիրավական համագործակցության նոր հայեցակարգերի

մշակում. Համագործակցության «հորիզոնական» (պետությունների միջև) և «ուղղահայաց» (պետությունների և միջազգային քրեական դատարանների միջև) տեսակների տարբերակում, էքստրադիցիայի ընթացակարգերի և միջազգային քրեական դատական ատյաններին մեղադրյալներին փոխանցելու չափանիշների մշակում, էքստրադիցիոն գործընթացում իրավապաշտպան գործոնի զարգացման ուղիների հստակեցում, տարածաշրջանային բարեփոխումների (Եվրոպական Միության շրջանակներում) էքստրադիցիայի մեխանիզմի և հայեցակարգային նոր ինստիտուտի՝ եվրոպական կալանքի թույլտվության շրջանառությամբ պայմանավորված գիտական-տեսական հիմքերի վերլուծություն:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Ատենախոսությունում, պայմանավորված հետազոտության նպատակներով և խնդիրներով, կիրառվել են հասարակական գործընթացների և իրավական երևույթների հետազոտության հետևյալ համագիտական մեթոդները՝ վերլուծությունը, համադրումը, համակարգային մոտեցումը, ինդուկցիայի և դեդուկցիայի տրամաբանական հնարքները: Թեմայի առանձին ասպեկտների մշակման ընթացքում օգտագործվել են նաև մասնակի-գիտական, պատմական և իրավահամեմատական մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը: Հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվել անդրադառնալ քրեական արդարադատություն իրականացնող միջազգային դատական մարմինների հիմնադրման, դատավարական գործունեության, պետությունների հետ փոխհարաբերությունների առանձնահատկություններին և առկա խնդիրներին: Սահմանվել է «Հանձնման» ինստիտուտ իրավագիտական հասկացությունը: Բացահայտվել և հիմնավորվել են Միջազգային քրեական դատարանի իրավագործության իրականացման առանձնահատկությունները և ՄԱԿ-ի կանոնադրության համապատասխան դրույթների բովանդակության հետ դրանց համապատասխանությունը: Քննարկման առարկա են դարձել նաև Վերսայի և Սևրի պայմանագրերի որոշակի դրույթներ՝ դրանցով նախատեսված դատական մարմինների ստեղծման և այդ մարմինների իրավագործության սահմանման մասով ¹ : Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ, հեղինակի կողմից կատարված տեսական մոտեցումներում և գիտագործական բնույթի առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Ներկայումս հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի հանձնման հետ կապված պետությունների հայեցողության սահմանները լրջորեն սահմանափակված են մարդու իրավունքների միջազգային իրավունքով սահմանված երաշխիքային բնույթի սկզբունքներով և նորմերով: Ուստի, մարդու

¹ William A.Schabas. An Introduction to the International Criminal Court Second Edition.Cambridge, 2001, 2004, P.3-7

իրավունքների միջազգային չափորոշիչները Հայաստանի Հանրապետությանը պարտավորեցնում են ապահովել հանձնման ենթակա անձի ինչպես ազգային օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքները և ազատությունները: Այս փաստի ուժով մեր հանրապետությունը կարող է իրավախախտ ճանաչվել, ոչ միայն իր իրավասու մարմինների ոչ իրավաչափ գործողությունների և որոշումների համար, այլև այն պետության ոչ իրավաչափ գործողությունների և որոշումների համար, որին հանձնել է վերջինիս կողմից պահանջվող անձին:

2. Չնայած Հայաստանի Հանրապետության ՔԴՕ-ի 479-րդ հոդվածում օգտագործվում է՝ «հանձնել միջազգային դատարանին» ձևակերպումը, այդուհանդերձ այն գուրկ է սահմանադրաիրավական հիմքից, քանի որ ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածում տեղ գտած ձևակերպումներն ըստ էության թույլատրում են անձին հանձնել միայն օտարերկրյա պետությանը՝ բացառելով նրան միջազգային դատարանին հանձնելու հնարավորությունը: Ավելին, կարծում ենք, որ հանձնման ինստիտուտին առնչվող ՀՀ սահմանադրական և օրենսդրական իրավադրույթների նույնիսկ շատ համարձակ և ընդլայնված մեկնաբանությունը հիմք չի կարող հանդիսանալ Հայաստանի Հանրապետության կողմից անձին միջազգային դատարանին հանձնելու համար:

3. Ինչպես վկայում է հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, զգալիորեն մեծացան հանձնման պատրվակով, կամ ավելի ճիշտ է ասել հանձնմանն առնչվող տարաբնույթ հարցերով, մարդու իրավունքների և ազատությունների խախտման դեպքերը: Ասվածի համատեքստում հարկ է ընդգծել, որ քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համար վճռորոշ նշանակություն ունեն 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության երկրորդ գլխում ամրագրված 54-րդ և 55-րդ հոդվածները: Ըստ այդ հոդվածների՝ ապաստանի տրամադրման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով: Սույն հոդվածի բովանդակությունից անմիջապես բխում է, որ եթե օտարերկրյա պետության քաղաքացին քաղաքական նպատակներով իր երկրի պետական մարմինների կողմից հալածանքի ենթարկվի և հայտնվի ՀՀ իրավագործության ներքո, ապա ipso facto նրա մարդկային և քաղաքացիական իրավունքները Հայաստանում կպաշտպանվեն և օրինական հիմքերի բացակայության դեպքում էքստրադիցիայի չի ենթարկվի:

4. Նկատի ունենալով, որ հանձնման համար անհրաժեշտ են հետևյալ կարևոր նախապայմանները, այն է, ա/ լիովին պահպանվի հանձնող և ընդունող պետությունների իրավահավասարությունը և ինքնիշխանությունը, որն է կերպ չըջանցվեն սահմանադրությունը և օրենքները, բ/ հանձնումը և դրանից ածանցյալ հետագա գործողությունները իրականացվեն միջազգային իրավունքի պահանջներին համահունչ, ատենախոսության հեղինակը գտնում է, որ հանձնման ինստիտուտը կարելի է սահմանել հետևյալ կերպ. «Հանձնումը ազգային իրավունքի պահպանմամբ և միջազգային իրավունքի

համապատասխան նորմերի և սկզբունքների իրացման հիման վրա պետությունների միջև իրականացվող իրավական գործընթաց է, որի արդյունքում շահագրգիռ պետությունը հայցում և ստանում է հանցագործություն կատարած անձին այն երկրից, որտեղ այդ անձը գտնվում է կամ թաքնվում է՝ նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու կամ վերջինիս նկատմամբ արդեն իսկ կայացված դատավճիռն ի կատար ածելու նպատակով»:

5. Հանձնման ընթացքում անձի իրավունքների երաշխավորման շահերից ելնելով, կարևոր նախադրյալ կարող է հանդիսանալ այս հարցում դատական մարմինների պարտականությունների հստակեցումը: Մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր.-ի 478.1-րդ հոդվածի 4-րդ կետում նշվում է, «Եթե անձի ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում չի կայացվել նրան ժամանակավոր կալանավորելու մասին Հայաստանի Հանրապետության դատարանի որոշումը, ապա ձերբակալված անձը ենթակա է անհապաղ ազատման»: Ակնհայտ է, որ նշված իրավադրույթը թեկուզ ընդհանուր ձևակերպումներով չի պարտավորեցնում դատարանին անազատության մեջ պահել օտարերկրյա պետությունում հանցագործության կատարելու մեջ կասկածվող և Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերված անձին, ինչը կարող էր պատճառ հանդիսանալ դատարանի հայեցողության շրջանակների ոչ հիմնավոր, ոչ իրավաչափ ընդլայնմանը: Ատենախոսը գտնում է, որ ՀՀ քր.դատ.օր.-ի 478.1-րդ հոդվածի 4-րդ կետը խմբագրման կարիք ունի: Դրանում պետք է հատուկ ընդգծվի ժամանակավոր կալանավորման որոշմամբ անձին ազատությունից զրկելու նպատակները՝ «հանձնման իրավական հիմքերը, ինչպես նաև հանձնումը բացառող հանգամանքները»:

6. Նկատի ունենալով, որ հանձնման ինստիտուտը պահանջում է որոշակի ֆինանսական և նյութական միջոցների օգտագործում, դատական խնայողության և հանձնման գործընթացի արագացման նկատառումներով, առանց կանխորոշելու դատական վերանայման վերջնական ընթացքը, պետությունները պետք է ձգտեն հստակեցնել բողոքարկման ընթացակարգերը: Այս առումով նպատակահարմար է իրավասու անձանց տվյալների, հանձնման միջնորդությունների և պատասխանների փոխանցման համար առավել շատ օգտագործել ոչ թե ավանդաբար կիրառվող թղթային նամակագրությունը, այլ հեռահաղորդակցության ժամանակակից միջոցները, ինչպես նաև սահմանել հաղորդակցության նոր, առավել արդյունավետ միջոցներ:

7. Ներկա ժամանակաշրջանում, երբ առանձին պետություններ քողարկված, երբեմն նույնիսկ բացահայտ կերպով օգնում են անդրսահմանային հանցավոր, այդ թվում ահաբեկչական խմբավորումներին կամ ղեկավարվելով իրենց քաղաքական շահերով, ոտնահարում են հանձնման ինստիտուտին առնչվող միջազգային պայմանագրային իրավադրույթների տառը և ոգին, ինչպես օրինակ կատարվեց Ադրբեջանի և Բելառուսի կողմից, պետությունների միջազգային ընտանիքը պարտավոր է էլ ավելի կարևորել միջազգային ինստիտուցիոնալ և դատական կառուցակարգերի շրջանակում պետությունների՝ քրեական գործերով

համագործակցությունը, իսկ իրավախախտ պետություններին իրավաչափ գործողություններ կատարելու միջազգային իրավական «պարտադրանքը» պետք է համարվի պետությունների միջազգային համագործակցության *ius cogens* սկզբունքից բխող իրավաչափ գործունեություն:

8. Մարդու իրավունքների պաշտպանության շահերը պահանջում են, որպեսզի հանձնման մասին ներպետական իրավական ակտերում և միջազգային պայմանագրերում հստակ նախատեսվեն մի շարք երաշխիքային դրույթներ, որոնք պետք է կիրառվեն հատկապես անձի համաձայնությամբ հանձնման պարագայում: Մասնավորապես, այդ դրույթներում պետք է նշվի, որ անձի համաձայնությունը պարտադիր է դատարանում քրեական պատասխանատվության ենթարկվելու կամ դատավճռի կրման համար իրեն այլ պետության իրավասու մարմիններին հանձնելու կապակցությամբ, համապատասխան ձևականացված ընթացակարգերի կիրառման առնչությամբ, ինչպես նաև անմիջապես իր այլ շահերին առնչվող հարցերի հետ կապված:

9. Եթե հանձնման ինստիտուտը հավասարապես հիմնվում է ինչպես ազգային, այնպես էլ միջազգային իրավունքի վրա, ապա հանձնման իրավական գործընթացի և մարդու իրավունքների պաշտպանության հրամայականի միջև հավասարակշռության ապահովման պատասխանատվությունը առավելապես գտնվում է յուրաքանչյուր պետության իրավագործության շրջանակում և ունի մշտական զարգացման և կատարելագործման կարիք: Առաջնորդվելով այս գաղափարախոսությամբ, ՀՀ կառավարության 10.03.2011 նիստի արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգի 1.17-րդ կետի ի) ենթակետով սահմանվել էր քրեադատավարական ընթացակարգերի կատարելագործումը, ինչի արդյունքում պետք է էապես բարելավվեր, կատարելագործվեր քրեադատավարական գործող համակարգը՝ նպաստելով քրեական արդարադատության արդյունավետության բարձրացմանը: Այդուհանդերձ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի 483-րդ հոդվածի 16-րդ կետը սահմանել է, որ. «1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ, 54¹-ին, 54²-րդ, 54³ րդ, 54⁴-րդ գլուխների դրույթներն ուժը կորցրած չեն ճանաչվում»: Մինչդեռ շրջանառության մեջ է դրված «Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքի նախագիծը, որի 80-րդ հոդվածով սահմանված է, որ. «Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված Քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ, 54¹-րդ, 54²-րդ և 54³-րդ գլուխները»: Օրենքի նախագծի հեղինակները անտեսել են այն հանգամանքը, որ նման մոտեցումն ակնհայտ հետընթաց է, այլ ոչ թե բարելավում կամ կատարելագործում: Քրեական դատավարության նոր օրենսգրքի 1-ին հոդվածը սպառիչ թվարկում է քրեական վարույթը կարգավորող օրենսդրությունը, այն է. «Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական վարույթը կարգավորվում է Սահմանադրությամբ,

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով և սույն օրենսգրքով»: Այս իրավակարգավորումները պետք է հստակ ամրագրվեն քրեական դատավարության օրենսգրքում, քանի որ դրանք անխզելիորեն կապված են քրեական դատավարության կարգավորման առարկայի հետ, այդ ոլորտի անջատ կարգավորումը չհիմնավորված նորարարություն է և ապացուցողական իրավունքի տեսանկյունից նոր քրեական դատավարության օրենսգրքից շրջանառվող օրենքի նախագծի ընդունումից հետո քրեական դատավարության օրենսգրքում ոլորտը կարգավորող կարևորագույն գլուխների ուժը կորցրած ճանաչելը խնդիրներ կառաջացնի ոչ միայն Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների, այլև այլ պետությունների իրավապահ մարմինների համար, որոնց տրամադրվում և որոնցից հայցվում է քրեական գործերով համագործակցությունը: Ի վերջո, ազգային օրենսդրությամբ են կարգավորվում խնդրահարույց բնույթի այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ պահանջվող անձին մինչև հանձնելը պետք է պահել կալանքի տակ, թե ոչ, ինչպիսի միջոցներ պետք ձեռնարկել նման անձանց փախուստը բացառելու համար, ինչ կարգով և որ փուլում են բողոքարկվում հանձնման մասին որոշումները և մարդու իրավունքներին առնչվող մյուս կարևորագույն հարցերը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Ատենախոսության մեջ առկա եզրակացությունները և առաջարկությունները նպատակաուղղված են խորացնելու հանրային կյանքում և փոփոխվող հասարակությունում իրավապահ մարմինների դերակատարության, դատական քաղաքականության ինստիտուցիոնալ համակարգի, դատական քաղաքականության սահմանների և ձևավորման նախադրյալների, ամրագրման իրավական ձևերի վերաբերյալ տեսական պատկերացումները: Իրականացված հետազոտության արդյունքները կարող են մեթոդաբանական հիմք դառնալ իրավական գիտության տվյալ ոլորտում հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

Հետազոտության գործնական նշանակությունը: Աշխատանքում ներկայացված եզրակացությունները և առաջարկությունները կարող են օգտագործվել. ՀՀ քրեական դատավարության օրենսդրության համապատասխան իրավական ինստիտուտների ներդրման ուղղությամբ փոփոխություններ իրականացնելու, ՀՀ-ում քրեաիրավական քաղաքականության արդյունավետության բարձրացման, մասնավորապես՝ Եվրոպայի Խորհրդի դատախազների խորհրդատվական խորհրդի հետ ներդաշնակեցման ոլորտում, իրավապահ մարմինների աշխատակիցների ուսումնառության և վերապատրաստման դասընթացներում, «Քրեական դատավարական իրավունք», «Միջազգային հանրային իրավունք» դասընթացներում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և դրանց ներդրումը պրակտիկայում: Հետազոտության արդյունքներն ամփոփված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք հրապարակվել են գիտական ամսագրերում և ժողովածուներում: Ատենախոսության մի շարք

դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են գիտական զեկույցների շրջանակներում: Հետազոտության թեմային վերաբերող առանձին հարցեր և հիմնախնդիրներ ներկայացվել են ատենախոսի զեկույցներում և հաղորդումներում, որոնք կապված են դատախարավական օրենսդրության բարեփոխումների հետ: Աշխատանքի արդյունքները փորձարկվել են ատենախոսության հեղինակի կողմից հանրապետական և միջազգային գիտաժողովներին մասնակցելու եղանակով:

Ատենախոսը, աշխատելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի իրավաբանական վարչության պետ, իսկ մինչ այդ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ, իսկ շուրջ 18 տարի` ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական կապերի բաժնի պետ, փորձագետ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդում և ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի քարտուղարությունում, գիտական հետազոտության արդյունքների հիման վրա մշակել է մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր, որոնց մի մասն արդեն 2012 թվականի մարտի 19-ին ներառվել է ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում:

Ատենախոսության պաշտպանության դրույթները և հետևությունները փորձարկվել են նաև Մենեջմենթի համալսարանի իրավագիտության ֆակուլտետում «Միջազգային հանրային իրավունք» դասընթացի դասավանդման ժամանակ, ինչպես նաև ՀՀ Արդարադատության ակադեմիայում դասախոսությունների ընթացքում:

ԱՏԵՆԱՊՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՈՒԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, 7 ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, դրա գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, ատենախոսության գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմքերը, մեթոդը, ատենախոսության նորմատիվ հիմքը, գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և ներդրումը, ինչպես նաև կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլուխը. «**Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման մասին միջազգային պայմանագրերի իմպլեմենտացիայի առանձնահատկությունները ժամանակակից միջազգային իրավունքում**» ունի երկու ենթագլուխ:

«Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի վերաբերյալ ներպետական իրավունքի եվոլյուցիան» վերտառությամբ առաջին ենթագլխում հանգամանալից ներկայացված են հանձնման ինստիտուտի զարգացման պատմական չորս փուլերը, հանձնման ինստիտուտի վերաբերյալ միջպետական հարաբերությունների եվոլյուցիան:

«Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի միջազգային-իրավական հիմքերի ձևավորումը» վերտառությամբ երկրորդ ենթագլուխը վերաբերվում է իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի վերաբերյալ ազգային և միջազգային իրավական համակարգերի միջև փոխգործակցությանը հանցավորության դեմ պայքարի կարգմակերպման հարցում, «aut dedere aut judicare» «կամ դատիր, կամ հանձնիր» սկզբունքի կիրառմանը, որը երաշխավորում է պատժի անխուսափելիության սկզբունքը և կանխորոշում հանցավորության դեմ պայքարում պետությունների միջազգային-իրավական համագործակցության պարտավորվածությունը:

Ատենախոսության երկրորդ գլուխը. **«Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման վերաբերյալ միջազգային պայմանագրային և ինստիտուցիոնալ համագործակցության առանձնահատկությունները Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից-պետությունների շրջանակում»** կազմված է երեք ենթագլուխներից:

«Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման վերաբերյալ միջազգային պայմանագրային համագործակցության առանձնահատկությունները» ենթագլխում ներկայացվում է հանձնման ինստիտուտը, որպես միջազգային փոխօգնության ակտ, ինչը հանդիսանում է միջազգային իրավական պրակտիկայում հանցավորության դեմ պետությունների համերաշխության յուրօրինակ դրսևորում:

«Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման վերաբերյալ ինստիտուցիոնալ և դատական ընթացակարգերը» ենթագլխում վերլուծության են ենթարկվել քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման հարցերով միջպետական համագործակցության միջազգային ինստիտուցիոնալ կառուցակարգերի հիմնադիր միջազգային իրավական փաստաթղթերը, դրանց համապատասխան պետության ստանձնած պարտավորությունները:

«Հանձնման ինստիտուտի և մարդու իրավունքների պաշտպանության հրամայականի միջև հավասարակշռության ապահովման խնդիրը» ենթագլխում ներկայացված է քրեական արդարադատության ամենախնդրահարույց հիմնախնդիրը: Հանցավորության դեմ պայքարի տարատեսակ իրավական ինստիտուտների կիրառմամբ չեն կարող անտեսվել միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքները և գործընթացը պետք է հիմնվի պատշաճ դատավարական երաշխիքների տրամադրման վրա հարկադրանքի միջոցների ենթարկված անձի նկատմամբ: Հանձնման հարցով որոշում կայացումը պետության ինքնիշխան իրավունքն է, սակայն այն իրականացվում է միջազգային և ներպետական

իրավունքի, ներառյալ մարդու իրավունքներին վերաբերող նորմերին համապատասխան²:

Ատենախոսության **«Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման վերաբերյալ միջազգային-իրավական համագործակցության զարգացումը և դրա սոցիալական իրավական նախադրյալները»** վերնագրված երրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

«Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը» առաջին ենթագլխում անդրադարձ է կատարված քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման բնագավառը կարգավորող իրավական հիմքերին՝ ներպետական օրենսդրությունը, միջազգային-իրավական բազմակողմ և երկկողմ պայմանագրերին, ինչպես նաև փոխադարձության հիման վրա կիրառվող բարի կամքի դրսևորմանը, ինչպես նաև դրանց փոխհարաբերությանը: Մարդու իրավունքների միջազգային չափորոշիչները, ինչպես մյուս պետություններին, այնպես էլ Հայաստանի Հանրապետությանը պարտավորեցնում են ապահովել հանձնման ենթակա անձի ինչպես ազգային սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքները և ազատությունները: Ընդ որում, ժամանակակից պրակտիկայում եզակի չեն այն դեպքերը, երբ հանձնող պետությունը կարող է իրավախախտ ճանաչվել, ինչպես իր համապատասխան լիազոր մարմինների ոչ իրավաչափ գործողությունների և որոշումների համար, այնպես էլ այն պետության գործողությունների և որոշումների համար, որին հանձնել է վերջինիս կողմից պահանջվող անձին: ՀՀ օրենսդրությամբ առանձին կարգավորման են ենթարկվում քրեական գործերով իրավական օգնության հետ կապված այն հարցերը, որոնք իրականացվում են միջազգային պայմանագրերի հիման վրա և իրավական օգնության այն հարցերը, որոնք կարգավորվում են միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում:

«Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման վերաբերյալ միջազգային-իրավական փաստաթղթերով ստանձնած պարտավորությունների բնույթը» վերնագրված երկրորդ ենթագլխում մանրամասն հետզոտության է ենթարկվել այն հանգամանքը, որ քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման հետ կապված միջազգային իրավական համագործակցության հիմքում ընկած իրավակարգավորումների համար հավասարապես կարևոր դերակատարություն ունեն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային իրավունքը: Կարևորվել է նաև այն հանգամանքը, թե այս կամ այն պետությունը գործնականում ինչպիսի ջանասիրությամբ և բարեխղճությամբ է կատարում իր ստանձնած միջազգային պայմանագրային պարտավորությունները:

² Лукашук И.И., Наумов А.В. Международное уголовное право. С. 213. Общая теория прав человека/ Отв. Ред. Е.А. Лукашева. М. 1996.

Ատենախոսության հիմնական եզրահանգումները.

1. Կատարված ուսումնասիրությունները հիմք են տալիս պնդել, որ քրեական գործերով իրավական օգնությունը և հանձնումը առնչվում են ինչպես միջազգային-իրավական նշանակության, այնպես էլ քաղաքական բնույթի հիմնասխնդիրների հետ: Այս ինստիտուտի կարևորությունը կայանում է նրանում, որ հնարավորություն է ստեղծվում միջազգային-իրավական գործիքակազմի օգնությամբ ապահովել քրեական-դատավարության անմեղության կանխավարկածի, կրկին անգամ դատվելու անթույլատրելիության. պատժի անխուսափելիության. հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման և այլ հիմնարար սկզբունքների իրացումը:

2. Հանձնման հարցերով որոշումը պետության ինքնիշխան իրավունքն է, սակայն այն իրականացվում է միջազգային և ներպետական իրավունքի, ներառյալ մարդու իրավունքներին վերաբերող նորմերին համապատասխան:

3. Քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերման տակ ի նկատի է ունեցվում օտարերկրյա պետության իրավասու մարմինների խնդրանքով քրեական գործերով առանձին դատավարական և այլ գործողություններ կատարելու, մասնավորապես, փաստաթղթեր կազմելու և փոխանցելու, խուզարկության, իրեղեն ապացույցներ առգրավելու, փոխանցելու և հանձնելու, փորձաքննություններ անցկացնելու, կողմերի, մեղադրյալների, վկաների, փորձագետների հարցաքննության, հանցագործություն կատարած անձանց դեմ քրեական հետապնդում հարուցելու, նրանց հետախուզման և հանձնման, ինչպես նաև փաստաթղթերի հանձնման միջոցով:

4. Ոչ պակաս կարևոր պայմաններ են իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումների արագ և բարեխիղճ կատարումը, գոյություն ունեցող գործնական կապերի պահպանումը:

5. Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման բնագավառում պետությունների միջազգային-իրավական համագործակցությունը պետք է իրականացվի միջազգային օրինականության ռեժիմում, զուգահեռաբար կիրառելով ինչպես միջազգային-իրավական, այնպես էլ ներպետական օրենսդրության նորմերը: ՀՀ օրենսդրությունը մշտապես պետք է թարմացվի, լրամշակվի, չնայած 2012 թվականի մարտի 19-ին կատարված փոփոխություններից և լրացումներից հետո ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը հիմնականում համապատասխանում է արդի պահանջներին:

6. Հանձնումը հանդիսանում է միջազգային համագործակցության էական տարր, ինչը կանխորոշում է դրա դերը և նշանակությունը հանցավորության դեմ պայքարի արդյունավետ կազմակերպման գործում: Չնայած քրեական հետապնդման իրականացման նպատակով մեղադրյալների ապահովման հարցում համագործակցության նոր ձևերի առաջացմանը, ինչպիսիք են՝ Եվրոպական կալանքի թույլտվությունը, Միջազգային քրեական դատարանին փոխանցումը, հանձնումը հանցավորության դեմ պայքարում իրավական

համագործակցության միջպետական համակարգում առաջատար դիրք է զբաղեցնում, քանի որ նշված մյուս ձևերը սահմանափակ բնույթ են կրում:

7. Ատենախոսական հետազոտության մեջ կատարված ուսումնասիրությունը հնարավորություն է տվել հիմնավորել, որ անհրաժեշտ է մշակել և ընդունել հանձնման մասին միջազգային ունիվերսալ կոնվենցիա, որը հնարավորություն կտա կարգավորել այնպիսի իրավիճակների հետ կապված հարցերը, որոնք առաջանում են միջազգային հանցավորության առավել վտանգավոր ձևերի, նախ և առաջ ահաբեկչության հակազդման ընթացքում, հանցավորության դեմ պայքարում պետությունների համագործակցության արդյունավետությանը խոչընդոտող առանձին էքստրադիցիոն սահմանափակումները շրջանցող և նման իրավիճակներում հանձնման առավել ճկուն համակարգ ձևավորելու նպատակով:

8. Էքստրադիցիան, որպես հանցավորության դեմ պայքարում պետությունների համերաշխության դրսևորում, պարտադրում է համագործակցության փոխհամաձայնեցված կանոնների կիրառություն, մասնավորապես rule of speciality:

9. Ժամանակի և ռեսուրսների խնայողության և համագործակցության արդյունավետության բարձրացման նպատակով նպատակահարմար կլիներ ԱՊՀ մասնակից-պետությունների տարածքում Եվրոպական կալանքի թույլտվության նման ստեղծել ԱՊՀ մասնակից պետությունների տարածքում միասնական իրավական ուժ ունեցող կալանքի թույլտվություն, որի հիման վրա ԱՊՀ մասնակից-պետությունում հայտնաբերված հետախուզվողների կալանքի թույլտվությունն այլևս ազգային դատարանի կողմից վերահաստատման ենթակա չէր լինի և ընթացակարգերն ավելի կպարզեցվեն:

10. Ատենախոսությունում հիմնավորվում է, որ հանձնման միջնորդությունների կոլիզիայի դեպքում, հիմնական որոշիչ գործոնը մարդու իրավունքների պաշտպանությունն է: Ատենախոսը պնդելով, որ հանձնումը պետք է մերժվի այն դեպքում, երբ վտանգ կա, որ հանձման ենթակա անձի հիմնարար իրավունքները կարող են ոտնահարվել հանձնումը պահանջած պետությունում, անկախ թե ով է հանձման ենթակա անձը և ինչ հանցագործություն է վերջինս կատարել, այդուհանդերձ գտնում է, որ ընդհանուր առմամբ ճիշտ չէր լինի մարդու իրավունքների պաշտպանությունը ստորադասել հանձնմամբ պայմանավորված մյուս շահերը, մասնավորապես հանցավորության դեմ պայքարը և հանցագործության գոհերի պաշտպանությունը: Պատահական չէ, որ մասնագիտական գրականության մեջ ընդգծվում է հակամարտող շահերի հավասարակշռման անհրաժեշտության մասին: Պետք է հաշվի առնել, որ մարդու իրավունքների և հանրային շահերի միջև օպտիմալ հավասարակշռության ապահովումը հանձնման գործընթացում ուղղակիորեն կապված է այն ռիսկերի հետ, որոնց կարող է ենթարկվել հանձնման ենթակա անձը հանձնումը պահանջած պետությունում: Չնսեմացնելով հանցավորության դեմ պայքարում միջազգային համագործակցության նշանակությունը՝ պետք է նկատի ունենալ, որ այնպիսի

հիմնախնդիրների վերլուծությունը, ինչպիսիք են հանձման ենթարկված անձին մահապատժի դատապարտելը, նրա նկատմամբ խոշտանգումների կամ դաժան, և/կամ խտրական վերաբերմունքը, ինչպես նաև non bis in idem արգելքի անտեսումը և այլն, պակաս կարևոր չեն հանձնման որոշման կայացման գործընթացում:

11. Ատենախոսը հիմնավորելով և գիտական շրջանառության մեջ դնելով համագործակցության տարբեր մոդելների հայեցակարգը. հորիզոնական (պետությունների միջև) և ուղղահայաց (պետությունների և միջազգային քրեական տրիբունալների միջև), գտնում է, որ անհրաժեշտ է բացահայտել նշված մոդելներից յուրաքանչյուրի հիմնական բնութագրիչները և դրանք տարբերակել՝ ըստ կարևորագույն իրավաբանական չափանիշների:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հարությունյան Ն., «Հանցավորության դեմ պայքարում միջազգային ինստիտուցիոնալ համագործակցություն . Դատախազների Միջազգային Ասոցիացիա», «Օրինականություն» ամսագիր, Ե. , 1998, N 3, 53-54 էջեր:

2. Հարությունյան Ն., «Հանցավորության դեմ պայքարում միջազգային համագործակցություն . հանցագործների հանձնում», «Օրինականություն» ամսագիր, Ե, 2005, N 34, 18-24 էջեր:

3. Հարությունյան Ն., «Մարդու իրավունքները և միջազգային իրավունքը», «Օրինականություն» ամսագիր, Ե. , 2007, N 44, 13-19 էջեր:

4. Harutyunyan N., «Fair trial in State of Emergency», «Collection of Articles made by International Academy for Human Rights of Abo/Turku», Finland, 2000, 46-48 pages.

5. Հարությունյան Ն., «Օրենքի գերակայության հայեցակարգը և պետությունների համագործակցությունը հանցավորության դեմ պայքարում», «Օրինականություն» ամսագիր, Ե. , 2012, N 72, 17-22 էջեր:

6. Арутюнян Н., «Проблемные вопросы сотрудничества государств в борьбе с преступностью», «Сборник Координационного Совета генеральных прокуроров СНГ», Астана, 2013, страницы 45-48.

7. Harutyunyan N., «Interaction of National and International Legal Mechanisms in Combating Tortures», «Third East European Conference on National Preventive Mechanisms, Combating and Investigating Ill -Treatment, Speeches Compendium Recommendations», Finland, Odessa, 2010, 48-50 pages.

8. Հարությունյան Ն., Ենգիբարյան Վ., Ղարիբյան Տ, Ամիրխանյան Ս., «Հանձնման (էքստրադիցիայի) ինստիտուտի միջազգային իրավական և ներպետական հիմնախնդիրները», «ՀՀ դատավորների միություն», Ե, 2016, 220 էջ:

9. Հարությունյան Ն., «Հանցագործների հանձնման համատեքստում մարդու իրավունքները հարգելու պետությունների պարտավորությունը . լավագույն հավասարակշռության փնտրությունը», «Դատական իշխանություն» ամսագիր, Ե. , 2021, N 9-10, 3-12 էջեր:

АРУТЮНЯН НЕЛЛИ НИКОГОСОВНА

ПРОБЛЕМЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ЗАКОНОДАТЕЛЬСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ПО ОКАЗАНИЮ ПРАВОВОЙ ПОМОЩИ ПО УГОЛОВНЫМ ДЕЛАМ, ВКЛЮЧАЯ ЭКСТРАДИЦИЮ (СРАВНИТЕЛЬНО- ПРАВОВОЙ АНАЛИЗ)

В диссертационной работе исследовано создание всеобъемлющей системы международной безопасности, которое находится в органичной связи с совершенствованием механизма сотрудничества государств по уголовно-правовым вопросам. К сожалению, до настоящего времени не удалось сформировать систему экстрадиции, отличающуюся универсальным характером и опирающуюся на универсальный договорно-правовой инструментарий. В этой связи, основная роль в вопросах выдачи принадлежит, главным образом, региональным механизмам, функционирующим на основе таких юридических документов как Европейская конвенция об экстрадиции, Конвенция стран СНГ о правовой помощи, Межамериканская конвенция о выдаче и т.д.

Действующая международно-правовая система экстрадиции в основном базируется на нормативном регулировании, не в полной мере учитывающем реалии ситуации, складывающейся в борьбе с такими деяниями, как терроризм, торговля людьми, отмывание доходов, нажитых в результате преступной деятельности, киберпреступления и т.п. В частности, составляющая правовую основу сотрудничества стран-членов Совета Европы в вопросах выдачи Европейская конвенция об экстрадиции, принятая 13 декабря 1957 г., по ряду параметров серьезно отстает от современных потребностей международного взаимодействия по уголовно-правовым вопросам.

В диссертации также рассмотрена такая фундаментальная проблема, как обеспечение прав человека в процессе экстрадиции, ее анализ на основе новейших доктринальных источников, изучения и обобщения опыта международных судебных (квасисудебных) органов, а также национальной судебной практики. Обеспечение оптимального баланса между интересами борьбы с преступностью и защитой прав индивидов, подвергающихся процедуре экстрадиции – важнейший элемент системы сотрудничества государств по уголовно-правовым вопросам, обуславливающее в современных условиях необходимость соответствующего комплексного анализа правозащитной составляющей выдачи. Экстрадиция не может рассматриваться лишь как изолированная сфера взаимодействия государств, без должного учета роли и влияния необходимости защиты индивидуальных прав

на механизм сотрудничества в уголовно-правовой сфере.

Актуальность темы настоящей диссертации определяется также недостаточным уровнем исследованности проблемы взаимодействия экстрадиции с различными видами уголовной юрисдикции, и, в особенности, универсальной юрисдикцией, получающей в последнее время все более широкое распространение в борьбе с такими международными преступлениями как геноцид, военные преступления, преступления против человечности и т.д.

Существенно новые моменты в осмыслении экстрадиции возникли в связи с динамичным развитием механизма международного уголовного правосудия, и, в частности, учреждением Международного уголовного суда (далее МУС либо Суд). Эффективное функционирование МУС предполагает использование качественно новой системы сотрудничества данного органа с государствами, применение отдельных процедур, по целому ряду важнейших параметров, отличающихся от традиционного механизма экстрадиции. В этой связи необходимость разграничения различных моделей сотрудничества (“горизонтального” – между государствами, и “вертикального” – между государствами и международными уголовными трибуналами (МУТ), с одной стороны, а также процедуры передачи обвиняемых с процедурой экстрадиции, явились важнейшими детерминантами, обусловившими актуальность проведения углубленного анализа института экстрадиции.

Среди факторов теоретического и практического характера, актуализирующих необходимость дальнейшего исследования проблем экстрадиции, фундаментальная роль принадлежит процессу модернизации международной системы сотрудничества в уголовно-правовой сфере, используемой странами Европейского Союза, которая завершилась заменой формальной процедуры экстрадиции механизмом европейского ордера на арест. Проведенная кардинальная реформа потребовала углубленного анализа обусловивших ее процессов, специфических характеристик европейского ордера на арест и особенностей его применения.

Таким образом, вышеизложенное свидетельствует о значительной актуальности темы диссертационного исследования, связанной с одной из наиболее узловых для международного уголовного права проблем, и необходимости ее комплексного анализа с учетом новейших потребностей межгосударственного сотрудничества по уголовно-правовым вопросам.

Диссертация состоит из предисловия, трех разделов, семь подразделов, заключения и списка используемой литературы.

NELLY NIKOGHOS HARUTYUNYAN

**THE PROBLEMS OF DEVELOPMENT OF THE LEGISLATION ON LEGAL
ASSISTANCE IN CRIMINAL CASES, INCLUDING EXTRADITION IN THE REPUBLIC
OF ARMENIA
(COMPERATIVE LEGAL ANALYSIS)**

The disserttion deals with the problems of states cooperation in fight against criminality, as an international jus cogens principle, by the Conventional (by using the universal, regional or biletarial treaties) or Institutional (via International institutions, for example UN specialized bodies, Council of Europe, European Union, Interpol, OSCE etc.) means, as a demonstration of the solidarity of States against criminality. Requesting and providing legal assistance in criminal cases, including extradition, is the most effective mechanism to guaranty the inevitability of punishment. As the analysis of modern trends in the development of extradition shows, its reform is an urgent need, which can significantly update the legal institution in question, adapting it to the latest conditions in the fight against international crime. Unfortunately, to date, it has not been possible to form a system of extradition that is notable for its universal character and is based on a universal treaty-legal toolkit. In this regard, the main role in extradition issues belongs mainly to regional mechanisms operating on the basis of such legal documents as the European Convention on Extradition, the Convention of the CIS countries on legal assistance, the Inter-American Convention on Extradition, etc. A comprehensive analysis of these mechanisms indicates significant gaps in legal regulation that significantly reduce their effectiveness.


The current international legal system of extradition is mainly based on normative regulation that does not fully take into account the realities of the situation in the fight against such acts as terrorism, human trafficking, laundering of proceeds from criminal activity, cybercrime, etc. In this regard, a fundamental task that meets the

interests of mutual cooperation in criminal matters is the adaptation of the extradition mechanism to the modern needs of combating crime.

The dissertation also examines such a fundamental problem as ensuring human rights in the process of extradition, its analysis based on the latest doctrinal sources, studying and generalizing the experience of international judicial (quasi-judicial) bodies, as well as national judicial practice. Ensuring an optimal balance between the interests of combating crime and protecting the rights of individuals undergoing extradition is an essential element of the system of cooperation between states on criminal law issues, which in modern conditions necessitates an appropriate comprehensive analysis of the human rights component of extradition. Extradition cannot be viewed only as an isolated sphere of interaction between states, without due regard to the role and influence of the need to protect individual rights on the mechanism of cooperation in the criminal law sphere.

The relevance of the topic of this dissertation is also determined by the insufficient level of research into the problem of interaction of extradition with various types of criminal jurisdiction, and, in particular, universal jurisdiction, which has recently become increasingly widespread in the fight against such international crimes as genocide, war crimes, crimes against humanity, etc.

Essentially new moments in the understanding of extradition have arisen in connection with the dynamic development of the international criminal justice mechanism, and, in particular, with the establishment of the International Criminal Court. In this regard, the need to distinguish between different models of cooperation (“horizontal” - between states, and “vertical” - between states and the International Criminal Tribunals (ICT), on the one hand. The dissertation consists of a preface, three sections, seven subsections, a conclusion and a list of used literature. The main provisions of the dissertation are reflected in scientific articles published by the author, as well as presented at various scientific conferences.

A handwritten signature in black ink, appearing to be 'S. P. ...', is located in the bottom right corner of the page. The signature is fluid and cursive, with a long, sweeping flourish extending upwards and to the right.